



ՔԱԶՄԱՎԱՐ

Զ. ՏԱՐԻ. ԹԻՒ 2.

1848

ՅՈՒՆՈՒԱՐԻ 15.

ԲԵՐԱՑԱԿԱՆ

ԱԶԴԱՑԻՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Պարսկա Յարութիւն Պետական Ռէզիստէնս, Ռէզիստէնս Արժարանին :

Են և բնական ուրախութիւն և շատ զօրաւոր քաջալերութիւն է միշտ անոնց՝ որ ազգին բազմաթիւ բնակիչն ունեցող քաղաքներէն հեռու պանդրիստելով՝ ազգին օգտին և յառաջադրիմութեանը կ'աշխատին, գէթ ատեն ատեն ազգասէր ու մեծանուն անձանց այցելութեանը հանդիպիլ։ Եր վանքն ու վարժարաններն ալ շատ անգամ ունեցած են և կ'ունենան այսպիսի պատիւ և ուրախութիւն։ բայց կընայ ըսուփիլ թէ այս պատիւներուն մեզի շատ մեծ երենան է որ չթողուր զանոնք հրատարակել՝ պարձենկատութիւն չերեցը նելու մաքով։ Իսկ աս անգամ հարկը

և երախտազիտութիւնը միանգամայն կը ստիպեն զմեզ մեր ոչեն խոտորիլ և կերպով մը պարձենալ՝ թէ անցած տարոյս վերջերը ուրիշ ազգասէր անձերէ զատ եկաւ հոս լի ենետիկ նաև մեծապատիւ Պարսկա Յարութիւն Պետական իշխանը, որ լուսանդրիոյ ծովային մաքրարանին վերատեսուն ու բժշկապետացը մէկն է։ Խնքը արդէն բարեյօժար առատաձեռնութք մեր վանքին իշխանգարանը հարիւրաւոր եղիպատական թռչուններով սողուններով և պատուական հնութիւններով զարդարերէ իւկ անցած տարւոյն վերջերը երբոր լոգիպտոսի կուսակալին յանձնարարու-

Թեամբը ըրած ճամբորդութենէն ետ
կը դաւնար՝ անձամբ եկաւ լի ենետիկ,
և պատուեց և ուրախացուց լիք զմեզ
և թէ լի ենետիկոյ Ուաֆայէլեան վար-
ժարանը, և փութաջան աշակերտաց
յառաջադիմութիւնը տեսնելով՝ չնոր-
հակալութեան և քաջալերութեն խօս-
քեր զուրցելէն ետքը, երկրորդ օրը
ինքնայօժար սիրով նոյն իմաստները
զրով աւանդեց մեզի, և իննդրեց ալ որ
տպագրութեամբ հրատարակենք օրա-
գրիս մէջ՝ առանց իր խօսքերն ու իմաստ
ները փոխելու : Խռ ահա աս պատճա-
ռաւ, այսպիսի բարեայցապարտ ու բա-
րեսէր իշխանի մը կամքը անկատար ըր-
ձգելու համար՝ կը տպենք հոս իւր գր-
լուածքը անփոփոխ :

Ո՞ւ երեցուցած զանազան աշխա-
տանքներնուղ պտուղները մեծ ուրա-
խութեամբ տեսնենիս՝ ինդրեմ ձեզմէ
սիրելի և բարեպտուղ որդիք՝ անտարա-
կոյս ինչ համարել. և միանդամայն ընդ-
ունել մեր չնորհակալութիւններն ու
բարեմաղթութիւնները : Ո՞ւանդամայն
չկարացինք արգելելներքին զարմանքնիս
որ այսչափքիչ ժամանակի մէջ հայրենի
և օտար լեզուաց այն աստիճան ծանօ-
թութիւն ստացեր էք . քաջ գիտելով
թէ որչափ աշխատանքի կարօտ է մարդս
այսպիսի իրաց մէջ կրթուելու և այնչափ
հմուտ ըլլալու : Ո՞ւ ասն որոյ և չենք կը-
նար դադարիլ՝ ի գովելոյ ձեր ուսման
ջանքը և սէրը, որպէս և ձեր ազնիւ
դաստիարակացը՝ որ անխնայ բովանդակ
կեանքերնին այժմեան ազգային երի-
տասարդութեան բարի կրթութեանը
կամաւ ընծայեր են :

‘ Ո՞յս մեծամեծ և անգին բարիքը
առատ ձեռքով և բարի սրտով ձեզի ձրի
բաշխեցին, և անդադար բաշխելու հետ
ըլլանին անցուշտ է . ուստի երախտա-
զիտութեան ոգին՝ ի ձեզ շարժելու հա-
մար հարկ չէ զձեզ յորդորել. վասն զի
ահա ձեր սրտին մէջ յայտնի և որոշ
գրերով կը տեսնենք ու կը կարդանք այս
ձեր մշտնջենական հատուցումը որով
ամէն բարեմնաւնդ մարդիկ վարձատրեր

են իրենց բարերարը : Բայց ինդրեմ
ձեզմէ, չամարիք որ միայն ձեր ազ-
նուահոգի դաստիարակացը երախտա-
զիտ ըլլալով պարտքերնիդ վճարած
կ'ըլլաք . ասոնց մէկ մասը միայն կը
վճարէք, և միւսը կը մնայ այն մարդա-
սէր և հայրենեաց սիրով վառեալ լին-
ձին, որ այս վարժարանը կանգներ և
ամէն պիտոյքը առատաձեռնութեամբ
հոգացեր է մշտնջենաւորութեան հա-
մար : Լայ և հանապազ հաստատուն
մնայ իր սուրբ յիշատակը լիստուծոյ նա-
խախնամութեամբը և իմաստուն կա-
ռավարութեամբը մեծին լիսիթարայ
միաբանից՝ որ անշուշտ իրաւունք ստա-
ցեալ են ’ի վերայ երախտագիտութեան
ընդհանուր ազգիս հայոց : լիմենակա-
րողն իրենց օգնական ու պաշտպան ըլլ-
այ, ու միշտ լուսաւորէ զանոնք՝ ինչպէս
մինչև հիմայ լուսաւորեց ու առաջնոր-
դեց ուղիղ և ձշմարիտ ձանապարհը :
Ուէ որ մէկը այս Ո՞իհաբանուեն ընթաց-
քին պատմութիւնը ’ի սկզբանէ ուշա-
զրութեամբ կարդալու ըլլայ, զիրնար ա-
նոր ամէն մէկ յառաջարիմութեն շարժ-
մանցը մէջ միշտ լիմենախնամին առաջ-
նորդութիւնը և հոգւոյն սրբոյ լոյսը
չտեսնել : Ո՞րչափ գրեթէ անյաղթելի
գժուարութիւներ, որչափ պարագայից
հակառակութիւններ իրենց դէմ գըտ-
նուեցան իրենց ձանապարհին մէջ.
բայց յուսով՝ համբերութեամբ և աս-
տուածային չնորհօք ամէնը յաղթեցին,
և հիմայ հանգիստ հոգւով կ'աշխատին
իրենց սուրբ և մեծ վախճանին համնե-
լու, որ է զիտութեամբ լուսաւորել ի-
րենց խեղճ՝ ողորմելի մնացած ազգը :
Ո՞վ կրնայ այսչափ մեծ և անգին բա-
րերարութեան հատուցումն ընել : Ի՞նչ
փոխարէն կրնայ ունենալ մարդս այսպի-
սի բարեգործութիւն մը վճարելու :
Ո՞ւնք կարող չենք այսպիսի բարեաց
փոխարէնը գտնել . բայց եթէ բոլորով
սրտիւ բողոքել առ լիստուած, որ միայն
ինքն կարօղ է վարձատրել զանոնք :
Ուստի աս պարագան մեզի և ամենայն
հայրենասէր անձանց պարտք մը կը դնէ
մշտնջենաւորապէս չնորհակալ ըլլալու

անոնց համար , և անդադար աղաւելու որ տայ փոխարէնը իր յաւիտենական գանձէն ըստ բարի և հայրենասէր ջանից նոցա :

„ Եսոնցմէ 'ի զատ Ճշմարտութիւն մ'ալ կ'ուզեմ ըսել ձեզի , սիրելի և բարի որդիք : Ըկարծէք թէ ձեր գիտնական աշխատանացը վերջը հասաք . ասկէ ետքը ձեր բուն ուսումնական աշխատանքը պիտի սկսի : Ո՞ինչեւ հիմայ մարդկային գիտութեանց միայն սկըզբունքներուն մէջ վարժուեցաք , որոնք անսահման կը տարածուին : Գիտութիւնը թէ որ սահման ունի նէ , միայն տգիտութեան դիէն կը տեսնուի : Ես սահմանը դուք կոտրեցիք և կտորները ոտքերնուդ տակը առնելով՝ գիտութեց և ծանօթութեանց երկիրը հասաք : Ո՞էկ մը աշքերնիդ վերուցէք ու տեսէք ձեր հորիզոնը , որ ի՞նչ զուարձալի երկրի մէջ հասեր էք բարեբաղդութեամբ : Հոս պիտի գտնաք հոգւոյն ամէն զուարձութիւնը և ամէն միխթարանքը՝ որշափ որ աշխարհիս մէջ Եմենախնամն մարդուս չնորհեր է , բայց հրամայեր է որ առանց աշխատանքի մարդս այս բարեքը չվայելէ :

„ Ուստի պատրաստ եղէք քաջութք և սիրտ առէք ձեր ազնիւ դաստիարակներուն գովելի օրինակէն . ինչպէս որ իրենք յուսով՝ համբերութք և յարատեութեամբ ամէն դժուարութիւները և պարագայից հակառակութիւնները կտրձութեամբ յաղթեցին և յառաջադէմ եղան զանազան վարժութեանց մէջ , դուք նաև ասոնց նման ըլլաք . որպէս զի ոչ միայն պատիւ ըլլաք ձեր անձին՝ ձեր վարժարանին՝ ձեր ծնողացը , հապա մեր սիրելի աղգին ալ , որ բովանդակյոյսը և իր խնդալի ապագայն ձեր վրայ զրած ըլլալով՝ անհամբեր ձեղ կը պասէ : Երդարեւ , ձեզմէ և ձեզի նմաններէն կըսկսի մեր տառապեալ աղգին նոր օրը և նոր դարը : Պատմագիրը արդէն սկսաւ զուարթ գրչով գրել ձեր անունը ոսկեզօծ մատենագրքին վրայ առի յիշատակ յաւիտենական գովեստի : Ո՞րն է ձեր մէջը որ արժանապէս չպա-

տասիսանէ աղգային կոչմանը , և անհոգ կենալով չշարունակէ իր բարի ձեռնարկութիւնը : Ո՞եր հոգին կը վըկայէ որ ոչ ոք կայ ձեր մէջը անհոգ աղգին խնդիրքը կատարելու , հապա իւրաքանչիւր ոք վառեալ կը տեսնենք բարի նախանձով ջանալ արժանի ըլլալու գովեստներու պսակին , :

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԻՊՈՒԱԾ

Բարեսկրտ Տարբ :

Պատսարու մէկը իր գեղէն քաղաք գնացած ըլլալով , ծախած բաներուն գինը , 120 Փուանք , լաթի մը մէջ կը պլէ զգուշութեամք ու իշուկին վրայ սապատին մէջ կը տեղաւորէ՝ գեղը կը դառնայ : Հուն համնի տեսնէ որ ստակը չկայ . կը շփոթի խեղճ կինը , կուլայ կ'ողբայ , գլխուն եկած փորձանքը կը պատմէ զրացիներուն . Երկրորդ օրը կը դառնայ քաղաք , կ'ըսէ դատաւորին , ուրիշ գեղերը կը հարցընէ , բայց անօգուտ :

Երկու օրէն ետքը գեղացի մը կ'ելլէ դիմացը յոգնած դադրած , կը նայի երեսը , „ Հարիւր քսան Փուանք կորսրն ցընողը հրամանքդ ես , կ'ըսէ : — Ի՞նչ ըսել է , ես եմ . միտուելով փնտուելով հոգիս բերանս եկաւ , կ'ըսէ պառաւը : — Իմին ալ զքեզ փնտուելով հոգիս բերանս եկաւ , կ'ըսէ գեղացին . երեկուրնէ ի վեր ետևէդ կը վազէի . առ ստակդ մարիկ , գնա վայելէ ու իս այսչափ վազցընելուդ վրայ ալ ուրախացիր , :